Խմենք, եղբայրներ, այն մարդու կենացը, որ մտցրուց մեր մէջ այդ ոգին, խմենք այն գործի յաջողութեան համար, որը մեր սուրբ ուխտն էէ:

Բաժակները զարկոեցան մէկ մէկու եւ խմեցին որսորդ Աւօյի կենացը, բոլորը միաձայն գոչելով՝ «կեցցէ՛ բարի գործը»...

ԺԹ. ԵՐԱՁ

Դարձեալ նոյն հին երգը, մտածում էի ես Կարօյի ճառը լսելու միջոցին — նոյն երգը, որ նա երազում էր տասն եւ երկու տարի առաջ գիւղացիների եւ նրանց աղքատութեան մասին:

Կարօյի եւ նրա կուսակիցների նպատակը թւում էր ինձ ոչ միայն անգործադրելի. այլ որպէս ցնորք, որպէս հիւանդոտ երեւակայութեան զառանցութիւն: Միթէ կարելի՞ է գիւղացուն հանգստութիւն տալ, ազատել նրան աղայի ճանկերից, որի մէջ կայ այնքան ուժ, որը վայելում է այնքան արտօնութիւններ: Եւ ինչո՞վ, որպէ՞ս ապահովել մշակի ապրուստը, երբ ոչ մի օրէնք չէր սահմանափակում աղայի կամայականութիւնը. երբ կառավարութեան ֆիրմաներն եւս մնում էին անզօր եւ չէին կարողանում աղաների բռնութեան առաջն առնել: Ես գիտէի հարիւրաւոր օրինակներ, որ ժողովրդի բարօրութեան մասին շնորհած արքունի ֆիրմաները մնում էին անգործադրելի. խաները եւ բեկերը Բարձրագոյն Դռան հրովարտակը ստիպեցնում էին բերողին ծամել եւ կուլ տալ, կամ պատռելով եւ ծեծելով բերողին, այնպէս ճանապարհ էին դնում նրան, ասելով՝ «գնա՛յ, թագաւորիդ խաբար տա՛ր»: Եւ այսպիսի գազանները, որոնք ժողովրդի արիւնն էին ծծում, առանց խոնարհոելու որեւիցէ իշխանութեան, մնում էին միշտ անպատիժ:

Այժմ Կարօն, ոգեւորած մի մոլի եռանդով, իւր անձնազոհ ընկերների հետ, աշխատում էին յեղափոխել հին դրութիւնը, աշխատում էին փշրել ստրկութեան շղթաները, որոնք դարբնոել էին այնքան շատ դարերով: Եւ ինչո՞վ, որպէ՞ս...

Ինքը Կարօն խիստ ճիշտ նկատեց իր ճառի մէջ՝ թէ «ստրկութիւնը դարձել է ժողովրդի մէջ բնաւորութիւն»: Միթէ՞ հեշտ է փոխել բնաւորութիւնը, դարերով ամբոխի հոգու մէջ արմատացած բնաւորութիւնը: Ի՞նչ օգուտ, երբ մի քանի եռանդոտ անձինք զարթել էին, հասկանում էին ժողովրդի չարն ու բարին, եւ աշխատում էին դարման տանել նրա խղճութիւններին, — երբ այդ մի քանի անձանց բոլոր ջանքերը կորչելու, ոչնչացնելու էր ընդհանուր անտարբերութեան մէջ: Նրանց բարբառը լինելու էր անապատում հնչող ձայն, եւ նրանց գործակցութիւնը, որպէս մի համերաշխութիւն գերեզ-